

ՎԱՅՆԱՍՈՒՆ ԲԱՐՉՐԱՑՆԵԼՆ ՌԻՂՂԱԿԻ ԾԻԾԱՂԵԼԻ Է

Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 10-ին ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, պետական, սահմանադրական կարգը բռնի տապալելու ուղղված կոչեր եւ հայտարարություններ, ինչպես նաեւ դրանց իրականացման ուղղությամբ կոնկրետ գործողություններ եւ նախապատրաստական ծավալուն գործունեություն կազմակերպելու փաստով ձերբակալվել են «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության ղեկավար, Լիբանանի քաղաքացի Ժիրայր Սեֆիլյանը եւ Վարդան Մալխասյանը:

Փաստի առնչությամբ հարուցվել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 301 հոդվածի հատկանիշներովՔ Քննությունը վարում է ԱԱԾ քննչական վարչությունը

Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի ձերբակալության փաստը դատապարտելու, ինչպես նաեւ ի պաշտպանություն «հալածյալների» կոնկրետ «գործողությունների հաջորդականություն մշակելու» նպատակով երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի սրահներից մեկում էին հավաքվել արմատական ճամբարը ներկայացնող ուժերի եւ նորաստեղծ տարանուն շարժումների ներկայացուցիչներ:

Նժ առաջնորդ Արամ Կարապետյանի նախաձեռնությամբ երեկ անցկացված «կոնսուլտացիոն հավաքին» մասնակցում էին «Այլընտրանքից»՝ Պետրոս Մակեյանը, «Քաղաքացիական անհնազանդության» ղեկավար Ալեքսանդր Արզումանյանը, «Հանրապետությունից»՝ Սմբատ Այվազյանը, ԴժԿ-ից՝ Գրիգոր Զարությունյանը, «Մտավորական ֆորումից»՝ ակադեմիկոսներ Լենսեր Աղալովյանն ու Ռաֆայել Ղազարյանը, «Հայրենիք եւ պատիվ»-ի նախագահ Գառնիկ Մարգարյանը, ԱԺՄ առաջնորդ Վազգեն Մամուկյանը, ԱԻՄ առաջնորդ Պարույր ԶայրիկյանըՔ Ներկա էին նաեւ ԺՌԿ-ի եւ ՕԵԿ-ի ներկայացուցիչները, ԱԺ պատգամավոր Զմայակ Զովհաննիսյանը եւ այլք:

Չնայած Սեֆիլյանի պաշտպաններից եւ ոչ մեկին հայտնի չէր «պաշտոնական դիրքորոշումը» (այն է՝ ԱԱԾ-ի հաղորդագրությունը), սակայն դա չխանգարեց հռետորներին միաբերան հայտարարելու, թե «այս ամենից 37 թվի հոտ է փչում, դրանով իշխանություններն ուզում են ահաբեկել մեզ, վախ ու սարսափի մթնոլորտ ստեղծել»Ք Արմատականները համոզված պնդեցին, թե վերջերս տեղի ունեցած «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության անդրանիկ հավաքի ընթացքում հնչած ելույթների պատճառով են կատարվել ձերբակալությունները

Այդ հավաքին մասնակցած պատգամավորը՝ Զմայակ Զովհաննիսյանը, վստահեցրեց, թե «բռնության կոչեր չեն եղել, այլ եղել են զգացմունքային ելույթներ»Ք Զետո էլ հերոսական կեցվածք ընդունելով, հայտարարեց, թե «թող ինձ էլ ձերբակալեն»

«Մենք պետք է ճակատամարտ տանք եւ հեռացնենք այս իշխանություններին», իր հերթին հայտարարեց ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, որը նույնպես մասնակցել էր հիշյալ հավաքինՔ

Մյուս ակադեմիկոսին մեկ հարց էր հետաքրքրում՝ «Ի՞նչ ենք մենք որոշելու հիմա, քանի որ վտանգ կա, որ ուզում են երկրից արտաքսել Ժիրայր Սեֆիլյանին»

Միայն Պարույր Զայրիկյանը նկատեց, որ դեռեւս ներկաներից ոչ մեկին ծանոթ չէ «պաշտոնական տեսակետը», այսինքն՝ ինչ հիմնավորմամբ է նման մեղադրանք առաջադրվել Սեֆիլյանին եւ ՄալխասյանինՔ

Իսկ Վազգեն Մամուկյանն ընդհանրապես ձեռնպահ մնաց կատարվածի վերաբերյալ մեկնաբանություններ տալուց եւ ելույթ չունեցավ:

Ի վերջո, որոշվեց հանդես գալ հայտարարությամբ, որով պահանջելու են անհապաղ ազատ արձակել ձերբակալվածներին եւ ԶԶ քաղաքացիություն շնորհել Ժ.Սեֆիլյանին

Իսկապես ո՞վ է Լիբանանի քաղաքացի հանդիսացող (1967թ. ծնված) Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանը, որը 2000-ից սկսած, անընդհատ ասուլիսներ էր հրավիրում ու զինակիցներով շրջապատված հայտարարում, թե հանցավոր վարչախումբը «Սեղրին ծախում» է կամ «ազատամարտիկների արյան գնով ձեռք բերված տարածքները արդեն հանձնել է»:

Նախ նշենք, որ Սեֆիլյանի ԶԶ-ում կեցության սովորական կարգավիճակի ժամկետը լրացել է դեռեւս 2000 թվականին (նման կարգավիճակ նա ստացել է 1997-ին՝ երեք տարի ժամկետով)Ք Չնայած հենց 2000թ. էլ ժամկետը լրանալու մասին տեղեկացրել են Սեֆիլյանին (ինչը չերկարածվելու պարագայում նա պետք է լքեր Զայաստանը), սակայն վերջինս միայն 2003թ. օգոստոսին է դիմել ոստիկանության ԱՎՎ՝ ԶԶ քաղաքացիություն ստանալու համարՔ Եւ կրկին դիմել է 2005թ. դեկտեմբերին, սակայն մերժվել է Մեկ հիմնավոր պատճառով՝ հանդիսանալով օտարերկրյա քաղաքացի, զբաղվել է ակտիվ քաղաքական գործունեությամբ:

Մինչ օրս արդարադատության նախարարությունում գրանցված չէ «Ազատագրված տարածքների պաշտպանություն» կազմակերպությունըՔ Գրանցված չէ նաեւ 2005-ի վերջին Սեֆիլյանի հիմնած «Արաքս-Կուր» հասարակական կազմակերպությունը: Մինչդեռ թվում է, թե նա օր առաջ պետք է գրանցեր իր ղեկավարած կառույցները, ինչը հնարավորություն կտար հանդես գալ սեփական ծրագրերի քարոզչությամբ, վարկանիշի բարձրացմամբ եւ այլնՔ Սակայն Սեֆիլյանը նախընտրում է կիսազաղտնի կառույցի ղեկավար լինելը

Սեֆիլյանի տնտեսական գործունեության մասին քիչ բան է հայտնիՔ Սակայն հետաքրքիր է իմանալ, թե այդ ինչպե՞ս եւ ի՞նչ գումարներով է հաջողվել նրան քաղաքի կենտրոնում (Տերյան փողոցում)

դառնալ «Նուրի» ռեստորանի տերը՝ Կամ՝ «շահույթ չի ետ ապնդող» ու չգրանցված «Ազատագրված տարածքների պաշտպանություն» կազմակերպության համար եռահարկ, տեխնիկական նորագույն հնարավորություններով հագեցած թանկարժեք գրասենյակ վարձակալել Արշակունյաց պողոտայում, ուր վարձակալման մեկ ամսվա արժեքը, մեր ունեցած տեղեկություններով, մոտ 1000 դոլար է՝

Ինչեւէ, մեր տեղեկություններով, վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում Սեֆիլյանը, Վ.Մալխասյանը, Ա.Եղյանը, Ա.Աղայանը, Ս.Յարությունյանը եւ այլք ամբողջ հանրապետության տարածքով փորձել են ձեւավորել «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության կառույցները, Նպատակը մեկն է եղել՝ սահմանադրական կարգը ուժային ճնշման միջոցով փոփոխելը՝ Դեկտեմբերի 2-ին Երեւանի պարարվեստի ուսումնարանի դահլիճում տեղի է ունեցել կազմակերպության փակ համաժողով, ուր հնչել են ՀՀ-ում գինված ապստամբություն իրականացնելու, զենքի եւ այլ կազմակերպված բռնի գործողությունների միջոցով իշխանափոխություն իրականացնելու կոչերը՝ Նախանշվել են դրանց իրագործման ուղիներն ու հնարավորությունները

«Օր առաջ զենքով, գինված պայքարով, ասպստամբությամբ ազատվելու այս թշնամիներից, քանի որ երկրում իշխանությունը հանձնված է թշնամիներին, թուրքերին», փակ համաժողովում կոնկրետ այս խնդիրն են առաջ քաշել ղեկավարները՝ Հնչել են կոնկրետ գործողություններ մղելու ծրագրեր.

«Սրանց դեմ պիտի միայն զենքով պայքարել, երկիրը զավթված է թշնամու կողմից, հիմա պատերազմական վիճակից ավելի բարդ վիճակ է, եւ պետք է սրանցից ազատվենք բոլոր ձեւերով»

Առանցքային խնդիրը համարելով նախկին ազատամարտիկներից եւ երիտասարդներից կիսառազմականացված «մոբիլ» խմբերի եւ «հատուկ պայմանների» համար նախատեսված ստորաբաժանումների ենթակառուցվածքների կայացումը՝ կազմակերպության ղեկավարները ծրագրել են դրանք հատուկ հրահանգով գործողության մեջ դնել առաջիկա համապետական ընտրությունների ընթացքում Ինչը բնականաբար երկրում իրավիճակը ծայրաստիճան սրելու, ապակայունացնելու եւ քաղաքացիական բախումներ սանձազերծելու նպատակային ծրագիր է ենթադրում՝

Ընդ որում՝ կազմակերպության անդամների մեծ մասին մինչեւ վերջ չի ներկայացվել գործողությունների ժամանակացույցը, նրանց ուղղակի հրահանգվել է ընդլայնել շարքերը, հավաքագրել նոր անդամների, համակիրների եւ պատրաստվել գործողություններին՝

Ձերբակալություններով, փաստորեն, կանխվել է նախապատրաստվող գինված հեղաշրջումը Այնպես որ, վայնասուն բարձրացնելն ուղղակի ծիծաղելի է՝ Թեկուզ եթե ձերբակալել են Արցախյան պատերազմի հրամանատարի:

ՎՐԵԺ ԱՐԱՐՈՆՅԱՆ